ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 մայիսի 2026 թվականի թիվ 58-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2026 թվականի ապրիլի 20-ին դիմումի հիման վրա հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) *պարզեց*.

2026 թվականի ապրիլի 20-ին Հանձնաժողով մուտքագրված քաղաքացի Տիգրան Մուրադյանի (այսուհետ նաև՝ Դիմումատու) դիմումում նշված է «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթների ենթադրյալ խախտման վերաբերյալ։

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Դիմումատուի դիմումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 侈值 կետով, 2026 թվականի ապրիլի 20-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 1 վարչական վարույթը։

Դիմումատուն հայտնել է, որ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության տնօրենը, կրելով մրցույթի միջոցով իրականացվող լիցենզավորման հայտը կազմելու և Հանձնաժողովին հավաստի տվյալներ ներկայացնելու պարտականություն, կազմել և Հանձնաժողով է ներկայացրել 106.9 ՄՀց հաճախականության օգտագործման մրցույթին մասնակցելու հայտ, որի մեջ ներառել է կեղծ բովանդակությամբ, Հանձնաժողովի համար ընդունելի (ցանկալի), սակայն իրականությանը չհամապատասխանող տվյալներ, որով չարաշահել է Հանձնաժողովի վստահությունը և ներկայացված կեղծ բովանդակությամբ տվյալների հիման վրա ճանաչվել է մրցույթում հաղթող։

Լիցենզիան ստանալուց հետո «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության տնօրենը չի կատարել լիցենզավորման հայտով ստանձնած ոչ մի պարտավորություն, որոնք մրցույթի հաղթող ճանաչվելուց հետո դարձել են լիցենզիայի պարտադիր պայմաններ: Չի կատարել հայտով ստանձնած ոչ տեխնիկական, ոչ ծրագրային, ոչ էլ ֆինանսական պարտավորություններից որևէ մեկը։

Դիմումատուն, հղում կատարելով «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության տնօրենի նկատմամբ թիվ ՀԿԴ/0165/01/23 քրեական գործի շրջանակում առանձնապես խոշոր չափերի հափշտակության մեղադրանք առաջադրելու հանգամանքին, նշում է, որ վերջինիս գործողությունները ենթակա են քրեաիրավական գնահատականի և բարձրացնում է մեղադրյալի կողմից հնարավոր նոր իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ պատշաճ միջոցների ձեռնարկման հարցը:

Նշել է նաև, որ 侈ՌԱԴԻՈ ՎԱՅԲ值 ՍՊ ընկերության լիցենզիայի պայմանների համաձայն՝ ծրագրերի մեծ մասը պետք է լինի սեփական արտադրության, մասնավորապես՝ «Մեկ նկարի պատմություն», «Futura. Հայաստան» և այլն, ընդ որում ծրագրերը պետք է մատուցվեն ռադիոլսողին հայերեն լեզվով և որակյալ բովանդակությամբ: Լիցենզիայի պայմանների համաձայն՝ հայերենալեզու ծրագրերին են վերաբերում ռադիոներկայացումները, հայկական գրականության աուդիոընթերցմամբ հաղորդումները և այլն:

Լիցենզիայի պարտադիր պայման հանդիսացող ծրագրերի նկարագրությունից հետևում է, որ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերությունը պարտավորվել է ստեղծել տարբեր բնույթի հաղորդումներ՝ զգալի տեղ հատկացնելով ռադիոներկայացումներին, հայկական գրականության աուդիոընթերցմանը, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդության համար կրթական հաղորդումներին, գիտատեխնիկական նվաճումներին և դրանց ուսումնասիրմանը:

Բացի այդ, լիցենզիայի պայմանների համաձայն՝ մանկապատանեկան կրթական ծրագրերում պետք է կիրառվեր «edutainment» գործիքակազմը՝ ուսուցում, իրազեկում զվարճանքի միջոցով՝ միավորելով մեդիայի թվային հնարավորություններն ու կրթական-ժամանցային տեխնոլոգիաները, ինչպես նաև նախատեսելով լուսավորչական հաղորդումներ: «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության տնօրենի հայտով ներկայացրել է նաև տեխնիկական հնարավորությունները:

Ըստ Դիմումատուի՝ հայտը գնահատելիս և լիցենզիա տրամադրելիս Հանձնաժողովը կարևորել և հիմք է ընդունել «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած վերը նշված կեղծ բովանդակությամբ տվյալները:

Դիմումատուն նշում է, որ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերությունը չի կատարել մրցութային հայտով ստանձնած և լիցենզիայի պարտադիր պայման հանդիսացող ոչ մի պարտավորություն: Ավելին, տեխնիկական վերլուծությունը ցույց է տալիս, որ 106.9 հաճախականությամբ միայն երաժշտական հոսքով հեռարձակումն իրականացվում է անհայտ հեռարձակողի կողմից՝ ծայրահեղ անորակ ազդանշանով, որը չի կատարվում Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում, իսկ մյուս վարչական շրջաններում ընդունումը չի համապատասխանում ժամանակակից FM հեռարձակման չափանիշներին և ծայրահեղ անկայուն է:

Դիմումատուն նշել է նաև, որ լիցենզիա ստանալու օրվանից մինչ օրս «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերությունը լիցենզիայի պարտադիր պայման հանդիսացող հաղորդումները կամ դրանցից որևէ մեկը չի հեռարձակել: Ավելին, փաստացի 106.9 հաճախականությամբ հեռարձակումն իրականացնում է անհայտ անձ, ով ոչ մի կերպ իրեն չի նույնականացնում:

Դիմումատուն նշել է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողի լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում:

Ըստ Դիմումատուի՝ 25.11.2025-ից մինչև 14.04.2026-ը ներառյալ 106.9 FM հաճախականությամբ բազմիցս բացակայել է հեռարձակումը ավելի քան 24 ժամ, և դա կրել է կանոնավոր բնույթ:

Դիմումատուն խնդրել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ և կասեցնել «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերությանը 27.05.2025թ. թիվ 68-Ա որոշմամբ տրամադրված լիցենզիայի գործողությունը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 21.04.2026թ. թիվ Ե/04/04.1/285-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և

հայտնել, որ այս հարցի շուրջ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 21.04.2026թ. թիվ Ե/04/04.1/286-26 գրությամբ տեղեկացրել է նաև Դիմումատուին:

Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 14.05.2026թ. Հանձնաժովող է ներկայացրել առարկություններ, ըստ որոնց՝

Դիմումատուի դիրքորոշումը հիմնված է այն պնդման վրա, որ Ընկերությունը որոշակի ժամանակահատվածում չի ապահովել 106.9 FM հաճախականությամբ լսողական հաղորդումների հեռարձակումը: Սակայն միայն այդ փաստի ձևական արձանագրումը բավարար չէ Ընկերության լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման համար:

Նշել է, որ Ընկերությունը շարունակել է իրականացնել անհրաժեշտ աշխատանքները և պահպանել է լիցենզիայի պայմանների կատարման ուղղությամբ իր պարտավորությունները:

Նշել է, որ Ընկերությունը չի հրաժարվել իր պարտականությունների իրականացումից: Ընդհակառակը, Ընկերությունը կատարել է կազմակերպչական, տեխնիկական, ֆինանսական աշխատանքներ, իրականացվել են համապատասխան ներդրումներ, ինչպես նաև ձեռնարկվել են հեռարձակման գործունեության ապահովմանը, կայունացմանը և շարունական իրականացմանն ուղղված գործողություններ:

Գտնում է, որ Ընկերության կողմից գործադրվել են ողջամիտ և հնարավոր լավագույն ջանքերը լիցենզիայի պայմանների պատշաճ կատարման համար, իսկ լիցենզիայի պայմանների դիտավորյալ կամ անհիմն չկատարման վերաբերյալ որևէ պնդում չի կարող հիմնավորված համարվել առանց կոնկրետ փաստերի, ժամանակագրության և ապացույցների հստակ ներկայացման:

Ընկերությունը Առարկություններին կցել է ներդրումների, նախապատրաստական աշխատանքների և իրականացրած գործողությունների վերաբերյալ համապատասխան ապացույցները :

Գտնում է, որ Ընկերության կողմից լիցենզիայի պայմանները պահպանվել են, ուստի Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով լիցենզիայի գործողության կասեցման հիմքն առկա չէ:

Ընկերությունը պնդել է, որ լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման միջոցի կիրառումն առանց ենթադրյալ իրավախախտման, մասնավորապես՝ 24 ժամ շարունակ հեռարձակում չապահովելու փաստի կոնկրետ օրվա և ժամի հստակեցման, ինչպես նաև առանց պարզելու, թե առկա են եղել արդյոք նման իրավիճակը հիմնավորող պատճառներ, կհանդիսանա անհամաչափ և ձևական մոտեցում ու չի բխի վարչարարության օբյեկտիվության և համաչափության սկզբունքներից:

Միաժամանակ խնդրել է մերժել Ընկերության նկատմամբ լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման վերաբերյալ Դիմումատուի պահանջը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն *արձանագրում է.*

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է.

«կարգավորող պետական մարմին՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.»:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են.

«3. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

4. 45 օրը լրանալուց հետո տեսալսողական հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման, ուղղման կամ դատական վեճերի առկայության վերաբերյալ Հեռարձակողը պատշաճ չի ծանուցվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:»:

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝

1) Հեռարձակողը սույն օրենքի 57-րդ հոդվածի 41-րդ մասով սահմանված հիմքով մեկ տարվա ընթացքում երեք անգամ ենթարկվել է վարչական տույժի (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի), որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

3) Հեռարձակողի կամ օպերատորի տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, որի հետևանքով վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը, տեխնիկական խոչընդոտներ են ստեղծվում այլ Հեռարձակողների և օպերատորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օրինական գործող ռադիոհաճախականություններ օգտագործող այլ սուբյեկտների գործունեության համար, չի ապահովվում տեսալսողական հաղորդումների տեխնիկական որակը.

4) լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում.

5) լիցենզիա ստացած Հեռարձակողը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ.

«Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել՝

1) լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լուծարման կամ ֆիզիկական անձի մահվան դեպքում, որի հիման վրա ֆիզիկական անձի մահվան փաստը լիազոր մարմնին հայտնի դառնալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում (հրաման).

3) եթե լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հետևանքով պատճառվել է ծանր վնաս.

4) լիցենզավորված անձի կողմից սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված խախտումները պարբերաբար կատարելու դեպքում.

5) մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ սույն օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերի համաձայն լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում.

6) լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում կասեցման պահանջների խախտմամբ կասեցված գործունեություն կամ այդ գործունեության առանձին գործառույթ կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություն իրականացնելու դեպքում.

7) լիցենզավորված անձի դիմումի համաձայն.

8) լիցենզիայի ժամկետը լրանալու դեպքում.

9) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Փաստում ենք, որ Հեռարձակողը 2025 թվականի հունիսի 07-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ 驟սփռման տարածքը՝ ք. Երևան, 106.9 ՄՀց հաճախականություն, լիցենզիայի սերիան, համարը՝ ՌՀ N 366, գործողության ժամկետը՝ 07.06.2025թ.- 07.06.2032թ.鷲:

Հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է Դիմումատուի ներկայացրած փաստարկները, ըստ որոնց՝ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերությունը մրցութային հայտում ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տվյալներ և դրանց հիման վրա ստացել լիցենզիա, որը ստանալուց հետո չի կատարել հայտով ստանձնած տեխնիկական, ծրագրային և ֆինանսական պարտավորությունները, իսկ Հանձնաժողովը լիցենզիան տրամադրելիս հիմք է ընդունել հայտով ներկայացված տվյալները: Փաստացի նշված հաճախականությամբ հեռարձակումն իրականացվել է անհայտ անձի կողմից, ազդանշանը եղել է անորակ և անկայուն, արձանագրվել են ավելի քան 24 ժամ հեռարձակման բացակայության դեպքեր, ինչպես նաև եթերում բացակայել են Հեռարձակողի նույնականացման տվյալները: Դիմումատուն հղում է կատարել Հեռարձակողի տնօրենի նկատմամբ իրականացվող քրեական վարույթին և առաջարկել օրենսդրական նախաձեռնությամբ սահմանափակել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձանց մասնակցությունը մրցույթներին:

Միաժամանակ Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև Հեռարձակողի ներկայացրած պարզաբանումները, ըստ որոնց՝ Հեռարձակողը հայտնել է, որ չի դադարեցրել լիցենզիայի պայմանների կատարմանն ուղղված աշխատանքները, իրականացրել է կազմակերպչական, տեխնիկական և ֆինանսական միջոցառումներ, կատարել ներդրումներ և ձեռնարկել հեռարձակման շարունակական ապահովմանն ուղղված գործողություններ, ինչի վերաբերյալ ներկայացրել է համապատասխան ապացույցներ: Հեռարձակողը նշել է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման համար անհրաժեշտ իրավական նախապայմանները տվյալ դեպքում բացակայում են: Հետևաբար, Հեռարձակողի կարծիքով, լիցենզիայի գործողության կասեցումը կամ դադարեցումը չի բխի վարչարարության օբյեկտիվության, համաչափության և օրինականության սկզբունքներից:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Անդրադառնալով Դիմումատուի այն պնդմանը, թե Ընկերության կողմից Հանձնաժողով են ներկայացվել *«կեղծ բովանդակությամբ, Հանձնաժողովի համար ընդունելի (ցանկալի), սակայն իրականությանը չհամապատասխանող տվյալներ»*՝ արձանագրում ենք.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա

ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Այս համատեքստում Դիմումատուի՝ «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տվյալների կեղծ լինելու վերաբերյալ պնդումներն իրավական առումով հիմնազուրկ են և ունեն լուրջ ապացուցման խնդիր:

Ի դեպ, հարկ ենք համարում նշել, որ Հանձնաժողովը նույնչափ կասկածներ չի ունեցել նաև մյուս մասնակիցների կողմից հայտերում ներկայացված տեղեկատվության վերաբերյալ և չի արձանագրել կեղծման տարրեր: Ընդհակառակը՝ մրցույթի բոլոր մասնակիցների հայտերին կցված փաստաթղթերը համապատասխանել են սահմանված պահանջներին և չեն պարունակել կեղծման կամ խեղաթյուրման ակնհայտ հատկանիշներ:

Հանձնաժողովը հարկ է համարում նշել նաև, որ նշված հարցն արդեն իսկ եղել է դատական քննության առարկա և քննվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից թիվ ՎԴ/9358/05/25 վարչական գործի շրջանակներում, որի վերաբերյալ Դիմումատուն տեղեկացված է, քանի որ հանդիսացել է տվյալ դատական գործով կողմի ներկայացուցիչ:

Մասնավորապես՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն արձանագրել է, որ լիցենզավորման հայտով ներկայացված ծրագրային, տեխնիկական կամ կազմակերպչական հայեցակարգերի հետագա հնարավոր չիրականացումը կամ ոչ ամբողջական իրականացումն ինքնին դեռևս չի վկայում, որ հայտ ներկայացնելու պահին Հանձնաժողովին ներկայացվել են ակնհայտ կեղծ տվյալներ կամ առկա է եղել Հանձնաժողովին մոլորեցնելու նպատակ:

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը չի հաստատել, որ «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել կեղծ տվյալներ կամ գործել է Հանձնաժողովին մոլորեցնելու նպատակով:

Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝ լիցենզավորման կամ հեղինակազորման համար ներկայացված փաստաթղթերում էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն է հայտնաբերվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար: Նշված իրավանորմերի տրամաբանությունից բխում է, որ վարչական մարմինը պարտավոր է հիմնվել բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ հաստատված փաստերի, այլ ոչ ենթադրությունների վրա:

Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական վարույթի նյութերում բացակայում են որևէ պաշտոնական, վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, որոնք կհաստատեին, որ Հեռարձակողի կողմից ներկայացվել են կեղծ փաստաթղթեր կամ ակնհայտ սուտ տեղեկություններ:

Մրցութային հայտում ներկայացված ծրագրերը, հաղորդումների նկարագրությունները, տեխնիկական զարգացման մոտեցումները գնահատողական և ապագային ուղղված մտադրություններ են, ոչ թե կատարված փաստերի հավաստումներ:

Ուստի Օրենքը մրցութային հայտի ծրագրային հայեցակարգերի հետագա չիրականացումը չի նույնացնում «կեղծ տվյալ ներկայացնելու» հետ: Բացի վերոնշյալը, բացակայում է նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որևէ դատական ակտ, որով կհաստատվեր փաստաթղթերի կեղծման կամ խաբեության փաստը:

Այսպես, Դիմումով չի ներկայացվել որևէ պաշտոնական ապացույց, որով կհաստատվեր, որ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության մրցութային հայտում առկա են եղել կեղծ փաստաթղթեր կամ ակնհայտ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Հետևաբար, Դիմումատուի կողմից ներկայացված պնդումները կրում են հռչակագրային և չհիմնավորված բնույթ: Ավելին, վերջինս, չստանալով իր համար ցանկալի արդյունքը թիվ ՎԴ/9358/05/25 վարչական գործի շրջանակներում, փաստացի փորձում է նույն հարցը կրկին դարձնել քննության առարկա սույն վարչական վարույթի շրջանակներում:

Միաժամանակ հարկ է նշել, որ Դիմումատուի կողմից օգտագործված՝ *«Հանձնաժողովի համար ընդունելի (ցանկալի) տվյալներ»* ձևակերպումը կրում է գնահատողական և ենթադրական բնույթ, որևէ փաստական հիմքով հիմնավորված չէ և չի կարող դիտվել որպես վարչական վարույթի շրջանակում ապացուցման ենթակա հանգամանք:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ թիվ ՎԴ/9358/05/25 վարչական գործի շրջանակներում վիճարկվել է Հանձնաժողովի «Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» 27.05.2025թ. թիվ 68-Ա որոշման իրավաչափությունը, որով մրցույթի հաղթող է ճանաչվել «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերությունը: Նշված վարչական գործի շրջանակներում դատարանները երկու ատյաններում կայացված դատական ակտերով արձանագրել են, որ Հանձնաժողովի 27.05.2025թ. թիվ 68-Ա որոշումը եղել է պատշաճ հիմնավորված և պատճառաբանված, իսկ մրցութային ընթացակարգն իրականացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Դիմումատուն նշել է, որ Հեռարձակողը չի կատարել լիցենզիայի պայման հանդիսացող ծրագրային, տեխնիկական և ֆինանսական պարտավորությունները, սակայն չի ներկայացրել լիցենզիայի բոլոր պայմանների կատարման կամ չկատարման լիարժեք ուսումնասիրության իրականացման ապացույցներ: Բացի այդ՝ Դիմումատուն հայտնել է նաև, որ Հեռարձակողը չի հեռարձակել Հայտով նախատեսված սեփական արտադրության հաղորդումները:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ լիցենզիան կարգավորող պետական մարմնի տրամադրած փաստաթուղթ է, որը թույլ է տալիս Հեռարձակողին տեսալսողական տեղեկատվության հեռարձակում իրականացնելու համար օգտագործել հանրային մուլտիպլեքսի սլոթ:

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է հայտ, որի ձևը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի հայտին կցվում են՝

1) փաստաթուղթ Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայմաններ.

2) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր.

3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ.

4) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ.

5) Էթիկայի կանոնագիրը, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա լիցենզիայի պայման.

6) Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայման.

7) լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը.

8) տեղեկանք հանրային մուլտիպլեքսը շահագործողից հեռարձակման ծառայությունների մասով ժամկետանց պարտքեր և պարտավորություններ չունենալու մասին, բացառությամբ սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին առաջին անգամ մասնակցելու դեպքի:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը հայտին կից ներկայացրել է Օրենքով և Կարգով պահանջվող տվյալները, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման և զարգացման վերաբերյալ տեսլականը:

Օրենքի 58-րդ հոդվածը լիցենզիայի կասեցման հիմքերը սահմանում է որպես հատուկ և սպառիչ իրավական հիմքեր: Նշված նորմում բացակայում է այնպիսի հիմք, ինչպիսին է ծրագրային քաղաքականության կամ մրցութային հայտում ներկայացված հաղորդումների կառուցվածքից ցանկացած շեղումը: Հետևաբար լիցենզիայի կասեցումը կարող է կիրառվել միայն Օրենքով ուղղակիորեն նախատեսված և պատշաճ կերպով ապացուցված լինելու դեպքերում:

Դիմումում գործածված «*ոչ մի պարտավորություն չի կատարվել*» ձևակերպումը գնահատողական է և փաստական առումով ևս հիմնավորված չէ:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Հեռարձակողի ներկայացրած պարզաբանումները, ըստ որոնց՝ վերջինս չի հրաժարվել լիցենզիայի պայմանների կատարումից, իրականացրել է կազմակերպչական, տեխնիկական և ֆինանսական աշխատանքներ, կատարել է ներդրումներ և ձեռնարկել հեռարձակման գործունեության ապահովմանն ուղղված գործողություններ և 2025 թվականի դեկտեմբերի 07-ից եթերում հեռարձակվել է:

Հետևաբար, վարչական վարույթի նյութերով չի հիմնավորվում, որ առկա են Օրենքի 58-րդ հոդվածով նախատեսված՝ լիցենզիայի գործողության կասեցման որևէ հիմք:

Դիմումատուն վկայակոչել է «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության տնօրենի նկատմամբ հարուցված քրեական վարույթը և առաջարկել է Հանձնաժողովին հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ սահմանափակելու ծանր

կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձանց մասնակցությունը լիցենզավորման մրցույթներին։

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված է անմեղության կանխավարկածը, այն է՝ հանցագործության համար մեղադրվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը:

3. Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնին ցույց տալ որևէ աջակցություն: Մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի, գույքային պատասխանողի և նրա ներկայացուցչի վրա: Մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականությունը հանրային քրեական հետապնդման դեպքում կրում է դատախազը, իսկ մինչդատական վարույթում՝ նաև քննիչը: Մասնավոր քրեական հետապնդման դեպքում այդ պարտականությունը կրում են տուժողը և նրա ներկայացուցիչը:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր ողջամիտ կասկածները, որոնք չեն փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան 6-րդ հոդվածի 2-րդ մասում հռչակում է.*«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:»*[1]

Հետևաբար քրեական գործով մեղադրանքի առկայությունը դեռևս չի նշանակում, որ անձը մեղավոր է։

Միաժամանակ, Օրենքը չի նախատեսում, որ անձի նկատմամբ քրեական հետապնդման առկայությունը կամ մեղադրյալի կարգավիճակը կարող է հանդիսանալ լիցենզավորման մրցույթին մասնակցելու, լիցենզիա ստանալու կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու հիմք։

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում։

Մասնավորապես, ինչպես նշվել է վերևում, Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկում է իրականացնում, ինչը վկայում է, որ Օրենքը վերահսկողության առարկա է համարում Հեռարձակողի փաստացի գործունեությունը, հեռարձակվող բովանդակությունը և օրենսդրական պահանջների պահպանումը, այլ ոչ տնօրենի քրեադատավարական կարգավիճակը։

---

[1] Գևորգ Բաղդասարյան-ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս՝ 侈Անմեղության քրեադատավարական կանխավարկածն ու մեղավորության քրեաիրավական կանխավարկածը值 Երևանի պետական համալսարան, 2024թ.։

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսդրությամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակումը հնարավոր է բացառապես դատարանի մեղադրական դատավճռի հիման վրա, մինչդեռ տվյալ դեպքում նման դատավճիռ առկա չէ։

Հարկ ենք համարում նշել, որ Հանձնաժողովը լիազորված չէ ստուգելու լիցենզավորման մրցույթի հայտ ներկայացրած ընկերությունների ղեկավարների անձնական տվյալները և նախկինում գործած զանցանքները։ Դիմումատուի կողմից մատնանշված հանգամանքներն ինքնին որևէ կերպ չեն վկայում այն մասին, որ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության տնօրենը չէր կարող հանդես գալ որպես լիցենզավորման մրցույթի մասնակից։ Ավելին, Հանձնաժողովը, գործելով Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, իրավասու չէ իրականացնել հանցագործությունների կանխարգելման, քրեական հետապնդման կամ անձանց հնարավոր ապօրինի վարքագծի կանխման գործառույթներ։

Դիմումատուն, անդրադառնալով լիցենզավորման մրցույթներին մասնակցելու չափանիշներին, առաջարկել է օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանափակել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց մասնակցությունը լիցենզավորման մրցույթներին։ Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով օժտված չէ օրենսդրական նախաձեռնության իրավունքով, ուստի Դիմումատուի առաջարկությունը վերաբերելի չէ սույն վարչական վարույթի առարկային և չի կարող հանդիսանալ վարչական վարույթի շրջանակում գնահատման ենթակա հանգամանք։

Այսպես, Հանձնաժողովի կողմից օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես գալու առաջարկություններն ու քրեական բնույթի Դիմումատուի պնդումները դուրս են տվյալ վարչական վարույթի առարկայից և չեն կարող հիմք հանդիսանալ լիցենզիայի կասեցման համար։

Անդրադառնալով Դիմումատուի այն պնդումներին, որոնք վերաբերում են 106.9 ՄՀց հաճախականությամբ հեռարձակման տեխնիկական որակին, ինչպես նաև առանձին վարչական շրջաններում ազդանշանի հասանելիությանը՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետը սահմանում է.
«մշտադիտարկում՝ կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների և օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկում.**»:**

Օրենքի 32-րդ հոդվածով սահմանված են Հանձնաժողովի որպես կարգավորող պետական մարմնի լիազորությունները, որոնք վերաբերում են տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորմանը և Հեռարձակողների գործունեության նկատմամբ վերահսկողությանը։

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկում իրականացնելու միջոցով։

Այսպես, Հանձնաժողովը Հեռարձակողների վերաբերյալ իր վերահսկողական լիազորությունը՝ մշտադիտարկումն, իրականացնում է ուղղակի դիտարկման միջոցով՝ Հանձնաժողովի գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեում, Հանձնաժողովում առկա տեխնիկական միջոցների կիրառմամբ։ Միաժամանակ հարկ է նշել, որ Հանձնաժողովը չի տիրապետում շարժական տեխնիկական կայանների կամ այլ տեխնիկական հնարավորությունների, որոնք հնարավորություն կտան իրականացնել

ռադիոազդանշանի որակի և հասանելիության չափումներ Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում կամ տեղանքներում։

Բացի այդ, «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության վերաբերյալ Հանձնաժողովի իրականացրած մշտադիտարկումների արդյունքներով Դիմումատուի կողմից մատնանշված հանգամանքները, այդ թվում՝ ենթադրյալ «անհայտ հեռարձակողի» կողմից հեռարձակման իրականացումը, ինչպես նաև նշված ծավալով և բնույթի տեխնիկական խափանումները չեն արձանագրվել։ Մշտադիտարկման արդյունքում չեն արձանագրվել նաև Հեռարձակողի կողմից 24 ժամ շարունակ տեսալսողական հաղորդումների հեռարձակում չապահովելը։

Անդրադառնալով Դիմումատուի այն պնդումներին, թե 106.9 ՄՀց հաճախականությամբ հեռարձակումը որոշակի ժամանակահատվածներում բացակայել է ավելի քան 24 ժամ՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Դիմումատուն նշված պնդումների վերաբերյալ նույնպես չի ներկայացրել ապացույցներ, որոնք հնարավորություն կտային հաստատել մատնանշված հանգամանքների առկայությունը։

Միաժամանակ, Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողները պարտավոր են պահպանել հեռարձակված տեսալսողական հաղորդումների ձայնագրությունները 45 օր ժամկետով։ Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 45 օրը լրանալուց հետո տեսալսողական հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման, ուղղման կամ դատական վեճերի առկայության վերաբերյալ Հեռարձակողը պատշաճ չի ծանուցվել։

Տվյալ դեպքում Դիմումատուի կողմից մատնանշված ժամանակահատվածը վերաբերում է 25.11.2025-ից մինչև 14.04.2026-ը, սակայն Դիմումատուն չի նշել որևէ կոնկրետ օր, երբ, ըստ վերջինիս, հեռարձակումը դադարեցվել է 24 և ավելի ժամ տևողությամբ, ինչպես նաև չի ներկայացրել որևէ բավարար տվյալ, որի հիման վրա հնարավոր կլիներ ժամանակին իրականացնել համապատասխան ստուգողական գործողություններ կամ արձանագրել վերջինիս կողմից մատնանշված հանգամանքները։

Հետևաբար, Դիմումատուի նշված պնդումները կրում են անորոշ, գնահատողական և չհիմնավորված բնույթ։

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի վերաբերյալ.

Ինչպես վերը նշվել է, Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերը սահմանում են Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցման հետևյալ պայմանները.

4) լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում.
5) լիցենզիա ստացած Հեռարձակողը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ։

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման համար անհրաժեշտ է միաժամանակ հաստատել երկու հանգամանք՝

1) առնվազն 24 ժամ շարունակ հեռարձակման փաստացի բացակայությունը,

2) այդ իրավիճակի՝ առանց հիմնավոր պատճառի լինելու հանգամանքը։

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ Դիմումատուի կողմից չեն ներկայացվել ապացույցներ, որոնք հնարավորություն կտային հաստատելու, որ նշված ժամանակահատվածներում հեռարձակումը փաստացի բացակայել է առնվազն 24 ժամ շարունակ, և այդ իրավիճակը պայմանավորված չի եղել հիմնավոր պատճառներով։

Դիմումատուն նշել է, որ Հեռարձակողը լիցենզիա ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ։ Սակայն Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ օրենսդիրը Հեռարձակողի համար նախատեսել է ժամկետ՝ լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում սկսելու տեսալսողական հաղորդումների հեռարձակումը։ Տվյալ դեպքում Հեռարձակողը Օրենքով սահմանված ժամկետում սկսել և իրականացրել է տեսալսողական հաղորդումների հեռարձակումը։

Հետևաբար, վարչական վարույթի շրջանակներում Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետերով սահմանված հիմքերի առկայությունը չի հաստատվել, հետևաբար չի կարող հիմք հանդիսանալ համապատասխան իրավական հետևանքների կիրառման համար։

Այսպես, Դիմումատուի վերոնշյալ փաստարկները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումն արձանագրելու և Հեռարձակողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց կիրառելու համար, մասնավորապես՝

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի
1-ին մասի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1鷲 վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը։

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին։

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում։

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 42-րդ հոդվածի 1-ին մասը, 46-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9.1-ին և 10-րդ մասերը, 58-րդ հոդվածի 1-ին

մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը, 3-րդ մասի 3-րդ կետը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածը, նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշումը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության նկատմամբ քաղաքացի Տիգրան Մուրադյանի դիմումի հիման վրա 20.04.2026թ. հարուցված թիվ 1 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն կողմերին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. մայիսի 20
ք.Երևան